



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Չ Մ Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր**

MINISTRY OF NATURE PROTECTION OF THE REPUBLIC OF ARMENIA

**HEAD OF STAFF**

МИНИСТЕРСТВО ОХРАНЫ ПРИРОДЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**РУКОВОДИТЕЛЬ АППАРАТА**

0010, ք. Երևան, Հանրապետության հր. Կառավարական 3-րդ տուն  
3 Government Bldg, Republic Sq, Yerevan, 0010, Armenia  
0010, Армения, г.Ереван, Дом правительства, здание N3  
Էլ.փոստ /E-mail/ эл.почта [min\\_ecology@mnp.am](mailto:min_ecology@mnp.am)  
Web page: [www.mnp.am](http://www.mnp.am)  
☎ (374 11) 818 520  
☎ (374 11) 818 506

№ \_\_\_\_\_

<< >> \_\_\_\_\_ 2015թ.

<<Բլեջան>> բնապահպանական, սոցիալական,  
բիզնեսի աջակցության ՀԿ-ի  
նախագահ Լ.Ասոյանին

**Հարգելի տիկին Ասոյան**

Ի պատասխան Ձեր 2015թ. հոկտեմբերի 23-ի գրության, հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետությունը 2003թ. Կիևում կայացած Եվրոպայի բնապահպանության նախարարների 5-րդ կոնֆերանսում ստորագրել է Օրիուսի կոնվենցիայի <<Աղտոտիչների արտանետման և տեղափոխման ռեգիստրների մասին>> /ԱԱՏՌ/ արձանագրությունը, ինչն ուժի մեջ է մտել 2009թ. հոկտեմբերի 8-ից: Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի 12 երկրներից միայն 4 երկիր է ստորագրել ԱԱՏՌ արձանագրությունը և դեռ չեն վավերացրել:

Արձանագրությունը վավերացնելուց առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել երկրում առկա հնարավորությունները և խոչընդոտները: ԱԱՏՌ արձանագրության Կողմ հանդիսացող երկրները պետք է ստեղծեն ԱԱՏՌ ազգային համակարգեր: Հայաստանը դեռևս չունի ԱԱՏՌ ազգային համակարգ:

Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել և զարգացնել հետևյալ հզորությունները՝ ԱԱՏՌ համակարգի համար համակարգչային ծրագրի գնում, տեղայնացում և տեղադրում, տեխնիկական հզորությունների զարգացում ձեռնարկություններում, ձեռնարկությունների համար օպերատորների նախապատրաստում, ուսումնասիրելով միջազգային փորձը՝ դիֆուզիոն աղբյուրներից արտանետումները հաշվարկելու համար մեթոդաբանության մշակում,



արտանետումների չափման և հաշվարկների մեթոդաբանության մշակում, հստակեցում և այլն:

ԱԱՏՌ արձանագրության ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կարող եք գտնել Օրհուսի կոնվենցիայի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ ազգային զեկույցներում /կետ 5.9/, որոնք տեղադրված են ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում <http://www.mnp.am/?p=169> կամ ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի Օրհուսի կոնվենցիայի քարտուղարության կայքում:

ԱԱՏՌ արձանագրության վավերացման գործընթացն արագացնելու համար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից վերջին տասը տարում իրականացվել է ավելի քան 15 միջոցառում, որում ներգրավվել են նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: ՄԱԿ-ի ԱԱՏՌ արձանագրության աշխատանքային խմբի հանդիպումներին Հայաստանի ներկայացուցչի հետ համատեղ մասնակցել են ՀԿ-ների և Օրհուս կենտրոնների համակարգողները:

Հարգանքով՝  
Աշխատակազմի ղեկավարի ժ/պ



Խ. Աղաբեկյան